


ՄԱՅՐ ԱԹՐՈՒԻ ԳԱՀԱԿԱԼԻՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Posted on July 7, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Գերդ Եագճեան, Երեւան, 30 Յունիս 2018

Սիրելիներ,

30 Յունիսի կեսօրին, Արցախի թեմի Քաշաթաղի շրջանի հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Աթանաս Վրդ. Մովսիսեանը թեմի սարկաւազէ մը ստացած է հեռաձայն, որով տեղեկացուած է, թէ թեմի առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեանը զինք քահանայագործելու իրաւունքէ զրկած է երեք ամիսով` [ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ, ՆՈՐ ՀԱՅՐԱՊԵՏ](#) նախաձեռնութեան յարելու համար:

Երբ հոգեշնորհի հայր սուրբը հեռաձայնով կրցած է կապ հաստատել առաջնորդին հետ` յայտնելու իր վրդովմունքը իր նկատմամբ անարդար որոշումին համար, վերջինս յայտնած է, թէ հայր սուրբը, ընդհակառակը, պէտք է շնորհակալ ըլլայ իրեն, քանի որ Մայր Աթոռի այսօրուան գահակալը ուզած է կարգազուրկ հռչակել հայր սուրբը եւ ինք կրցած է կաթողիկոսը համոզել` առայժմ բաւարարուիլ երեք ամիս կախակայումով, որը կայացուած է իր եւ ոչ թէ կաթողիկոսի անունէն:

Ց1-ամեայ վաստակաշատ հոգեւորականին նկատմամբ այս անարդար վճիռը անգամ մը եւս ցոյց կու տայ Մայր Աթոռի այսօրուան գահակալին ու անոր մանկլաւիկ Պարգեւ արքեպիսկոպոսին քինախնդիր ու հակաքրիստոնէական ետեւումը եւ կը միտի սովամահութեան դատապարտել իր գոյութիւնը հազիւ քարշ տուող Հայր Աթանասը` զայն իրենց հիւր կամակատար ստրուկին վերածելու ստոր դիտաւորութեամբ:

Յաւօք սրտի, 1990-ականներու առաջին կեսի իր դրական դերակատարութենէն ետք, Պարգեւ սրբազանը աստիճանաբար խրեցաւ Գարեգին Բ. կոչեցեալի սարքած ճահիճին մէջ` հեռանալով քրիստոնէական իսկական արժէքներէն:

Կը խնդրենք ամէն կերպ զօրակցիլ Հայր Աթանաս Վրդ. Մովսիսեանին եւ Ձեր բողոքագիրներով հեղեղել Արցախի թեմի առաջնորդարանի էլ. նամակի հասցէն` պահանջելով ԱՆՅԱՊԱՂ յետս կոչել Հայր Աթանասին նկատմամբ կայացուած անարդար որոշումը, այլապէս սպառնալով պոյքոթել Պարգեւ արքեպիսկոպոսը` յատկապէս սփիւռքի մէջ:

Արցախի թեմի էլ. նամակի հասցէն է`

arran123@mail.ru

